

ՀԱՅ ՄՇԱԿՆԵՐ

(Բարութեան սերմերից).

«Այս մի էր տանուտէր, որ տնկեաց այդի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան և շինեաց աշտարակ և ետ զնա ցմաշակո և գնաց ի տար աշխարհ։ իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ՝ առաքեաց զծառայն իւր առ մշակսն առնուլ զպտուզս նորաւ եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն և արարին նոցա նոյնպէս Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ, «Ճերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակըն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս, սա է ժառանգն, եկայք սպանցուք զոս, կալցուք դժառանգութիւն սորաւ եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայդին և սպանին։ Արդ՝ յորժամ եկեսցէ Տէր այգւոյն զինչ արացէ մշակացն այնոցիկ։ Զշարսն չարաւ կորուսցէ և զայդին տայցէ այլոց մշակաց, որք տացցեն նմա պտուզս ի ժամու իւրեանց» (Մատթ. իթ. 33—40)։

Այսպիսի առակ առաց Յիսուս հրէից, քիչ առակաւոր խօսքերով ցոյց տալով նրանց ամբողջ անցեալ կեանքը և ապագայ վիճակը։ Ո՞րպիսի բարիքներ է տեսել Իորայէլ ժողովուրդը Աստծուց։ Ինչպէս արծիւը թեերի վրայ առած տանում է իւր ձագերին, նոյնպէս և Աստուած Իուայէլացւոց ազգին անցկացրեց կարմիր ծովից, ազատեց գերութիւնից և նրանց տուաւ Քանանացւոց պտղաւէտ երկիրը։ Մովսիսի և այլ մարդարէների բերանով յայտնեց նրանց իր կամքը, տուաւ կեանքի ճիշտ օրէնքները, ընտրեց նրանց իբրև իւր սիրելի ժողովուրդ։ Յանձնեց նրանց իւր լաւագոյն այդին և սպասում էր, որ նրանք կմշակեն և ծիրոջը պտուղ կրերեն—այսինքն իրանց կեանքը կվարեն համաձայն Աստուածային օրինաց, մարդկանց

մէջ կսերմանեն արդարութիւն, երկրի վրայ կըազմացնեն սէր, միւս ժողովրդների համար օրինակ կհանդիսանան և իրանց վարք ու բարքի սրբութեամբ կփառաբանեն Տիրոջ անուան սրբութիւնը։ Սակայն իսրայէլացիք գուրս եկան չար մշակներ։ Եշր ճանաչում է իւր տիրոջը և եզր իւր մսուրը, բայց իսրայէլը մոռացաւ Աստուծուն, Աստուած հրէից նշաններ ցոյց տուաւ, մարդարէներ ուղարկեց. նշաններին ուշք չգարձրին, մարդարէներին ծաղրեցին, քարկոծեցին։ Այն ժամանակ երկնաւոր ողորմածն Աստուած ուղարկում է իւր Որդուն։ Փրկիչը կատարում է արտասովոր ողորմածութեան գործեր, մարդկանց ցոյց է տալիս ամենամեծ սէր, բաց է անում նրանց առաջ երկնաւոր իմաստութեան գանձերը, ունկնդիրներին քարոզում է արդար, խելացի և Աստուածային կեանք. իսկ հրէաները՝ դրա փսխանակ մահուան են դատապարտում նրան, խաչում են որպէս չարագործի աւազակների մէջ։ Եւ չար մշակների ձեռքից խլուեց այգին։ Նրանց մասին Փրկիչի ասած խօսքը կատարուեց. «Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։ Բայց ասեմ ձեզ թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայսմհետէ, մինչեւ ասիցէք օրհնեալ եկեալ յանուն Տեառն»։

Ահա այս միտքը ունի վերոյիշեալ առակը իսրայէլացւոց վերաբերմամբ, որոնք չլսեցին մարդարէներին և չընդունեցին Փրկչին։ Սակայն Աւետարանի խօսքը մի միայն ժամանակաւոր կամ տեղական նշանակութիւն չունի. նա վերաբերում է ամեն ժամանակի, խօսում է բոլոր ժողովդներին։ Յիսուս Քրիստոս իւր խօսքի մասին յաճախ նկատում է իւրաքանչիւր լսողի. «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս և արբցէ» (Յով. է. 37)։ Մենք ևս կարող ենք և նոյն իսկ պարտական այստեղ որոնել և մեր դասը. Մեզ ևս Աստուած տուել է իւր լաւագոյն այգին, կարգել է մեզ մշակներ և սպասում է Աստուածային գործի համար մեր աշխատանքների պտուղը ստանալու։ Ա. Աւետարանը սովորեցնում է մեզ Աստուծոյ արդարութիւնը. Քրիստոսի եկեղեցին իւր աղօթքներով և խորհրդներով

մաքրում է մեր սիրտը, ամրայնում մեր հոգեկան ոյժ երբ, թառ երկութին Աստուծոյ այդին պէտք է ծաղկէր, Աստուածային գործը երկրի վրայ աճէր, Աւետարանի արդարութիւնը բեղմնաւորէր մարդկանց մէջ, Քրիստոսի սէրը պէտք է լուսաւորէր մեր ամեն մի քայլը, Բայց իսկապէս շատ բան ուրիշ կերպ է գրուած, կեանքը չի տալիս ցանկալի բարի պտուղներ։ Մեր ամրազ կեանքի կազմը ցոյց է տալիս, որ մենք էլ այժմ, ինչպէս սրանից երկու հաղար տարի առաջ Խորայէլացիք, չար մշակներ ենք, Նայեցէր գէպի ուր են ուղղուած մեր ոյժերը, մեր միտքը, գիտութիւնը, աշխատանքներն ու հոգսերը, ինչ ենք որոնում մենք ամենից առաջ և ամենից աւելի, Երկնքի արքայութիւնն ու նրա արդարութիւնը՝ թէ մեր զուարձութիւնները, Անցել է տասն և ինն դար և աշխարհիս երեսին հեթանոսը աւելի շատ է, քան քրիստոնեան և մահմեդականութիւնը իւր յառաջադիմութեամբ և աճում առվ գերազանցում է քրիստոնէութիւնից, ինչ է դրա և այլ աւելի տխուր երեսյմների պատճառը, Պատճառը այն է, որ մենք չար մշակներ ենք, Աստուծոյ արդարութեան լոյսը, Քրիստոսի սէրը, Աւետարանի մաքրութիւնը չի լուսաւորում մեր կեանքի մէջ այնպէս, որ բոլորը տեսնեն մեր բարի գործերը և փառարաննեն մեր Հօրը, որ Երկնքումն է, Ասելութիւն մէկզմէկու, ամեն տեսակ ստութիւն, խորամանկութիւն, ապերախտութիւն մեղանում պակաս չէ, քան որ և է հեթանոսի մօտ Նայեցէր մեր առեւարին, ինչի վրայ է հիմուած—խարեբայութեան վրայ, վեր առէք մի ժողովրդի յարաբերութիւնը մի սւրիշի հետ, կամ նոյն երկրի մէջ զանազան գաստկարգերի յարաբերութիւնը միւմեանց հետ, զանազան գիշքի մարդոց յարաբերութիւնը, ինչով են առաջնօրդուում նրանց բոլորը—աւելի թոյլ են իրանց հպատակեցնելու, ուրիշների հաշուով ապրելոց ցանկութեամբ։ Արդեօք տեսնելում է մեր կեանքի մէջ, որ մենք գիտենք, լսել ենք և յիշում ենք Փրկչի խօսքերը։ «Որ կամիցի ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր ծառայու»

(Մատ. ի. 26—27.) Ինչով կարող ենք հեթանոսին հրապուրել, եթէ որ մենք մեր բնաւորութեամբ հեթանոս ենք, մեր քրիստոնէութիւնը միայն արտաքին է, կարծես շինծու:

Տան այդպիսի կահ-կարասի է լինում. լինում են թանկագին իրեղէններ խկական կաղնուց, ոև կամ կարմիր փայտից շինած. լինում են նաև իրեղէններ՝ յղկած, կաղնու կամ ոև փայտի նմանեցրած։ Դրսից կարծում են որ թանկագին փայտ է, բայց երբ եղունգով քերես, կտեսնես, որ գա կամ եղենի է կամ ցարասի։ Նոյնն է և մեր քրիստոնէութիւնը։ Դրսից կարծես քրիստոնեայ ենք. և՛ եկեղեցի ենք գնում և՛ երեսներս խաչակնքում և՛ Աւետարանի խօսքեր ասում, սակայն փորձիր եղունգով կպչել, ինչպէս շինծու փայտի, խոկոյն կտեսնես մեր խկական բնաւորութիւնը—գործ կգայ հեթանոսը, երեսն կգան ատելութիւնն ու շարախնդութիւնը։ Իսկ մեր արբեցութիւնը. կիրակի և որբոց տօներին մեր կատարած անվայելչութիւնները ի՞նչպէս պէտք է կարմիրենք մենք բերանը ոգելից ըմպելիք չդնող մահմեդականի կամ տօն օրը անժերի սրբութեամբ պահող հրէայի առաջ։ Եւ այդ գեռ ևս Աստուծոյ այդում՝ մեր կեանքը մէջ գործած մեր անկարգութիւնների մի մասն է միայն։ Մոռացել ենք թէ ով ենք մենք եւ ինչի համար ենք ապրում։ Աստուծոյ արտը թողել ենք անխնամ և նո ծածկուել է խիտ որոշով։ Մենք չար մշակներ ենք և Տանտէր—Աստծուն չենք տալիս հարկաւոր պտուղները։ Մարդկանց սերունդները, ծովի ալիքների նման, փոխանակում են նոր սերունդներով, իսկ կեանքը իւր բնաւորութեամբ նոյնն է մնում։ Ծնաւմ են նոր մարդիկ, ընդունում են նոր սովորութիւններ, շինում նոր քաղաքներ, իսկ նրանց միջի շարութիւնը, անարդարութիւնն ու բռնաբարութիւնը հին են, դարեւոր՝ անփոփոխ։ Մարդիկ հետազոտում են ամենահեռաւոր երկիրներ, ճանապարհներ են հարթում հինաւուրց անտառների և անապատների վիճով, իսկ իրանք իրանց, իրանց սիրտը, իրանց հոգու խաւարը և գայրենութիւնը

չեն ճանաշում։ Աստուծոյ արդարութեան ճանապարհների մասին գաղափար չունեն և խսկական կեանքը որոնելու մասին հոգ չեն տանում։

Մարդիկ թուով բազմանում են երկրի վրայ, նրանց հարստութիւնը բազմապատկւում, դիտութիւնը բեղմնաւորւում, նորանոր գիւտեր են լինում, միայն Աստուծոյ արդարութիւնը երկրի վրայ չի աճում այդ բոլորի համեմատ, չի բազմապատկւում Աւետարանի սէրը մարդկանց մէջ, չեն երեսում նոր անձնազո՞հ առաքեալներ, Քրիստոսի Հոգու աւետարերներ և Նրա կրօղներ։ Ուստի և—թէե Աստուծոյ աշխարհը շատ մեծ է, հրաշալի, գեղեցիկ, նրա միջի երանութիւններն ու ուրախութիւնները մարդուս համար անհամար, սակայն մարդկային կեանքը ծանր է և տիտար։ Մեզ տրուած է հրաշալի, հազուագիւտ այգի, ամեն ինչ յարմարեցրած է լաւագոյն մշակման համար, ցոյց են տրուած աշխատանքի ամենակատարեալ միջոցներ, բայց պտուղների առատութիւն չկայ։ Դրա պատճառը մենք ինքներու ենք—մենք չար մշակներ ենք։

Պետրովից Թարգմ. Գրիգոր Բինյ. Նոր-Արեւելանց.



Մ Ա Յ Ի Ա Յ Ո Ւ Թ Ա Ծ

Դեռ մայիսի 6-ին գիշերուայ 9 ժամին Նորին Սուրբ Օծութիւն Աղջիս Վեհափառ Հայրապետը մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ արդէն հասած էր համարել ժողովրդին եկեղեցական սահմանադրութիւն տալու ժամը և առաջարկել կազմել տաճկահայոց սահմանադրութեան պէս մի բան, որ շուտ ստորագրի և հրատարակի։ Սակայն գորա համար հարկաւոր էր ժամանակ և ժողովրդական ներկայացուցիչների հրաւեր ու աշխատանք. բայց կարելի էր հրատարակել կոնդակ այդ մասին, ուստի մայիսի 10-ի